ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԿՄ 2025
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «14» ապրիլ 2025

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետև՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն), ի դեմս նախագահ Արա Մեհրաբյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետև՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման (այսուհետև՝ որոշում), 1148. «Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» բյուջետային ծրագրի 11006. «Արտադպրոցական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» միջոցառման (այսուհետև՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

1.1. Պայմանագրով պետական մարմինը ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնում է որոշմամբ նախատեսված մինչև 30952300 (Երեսուն միլիոն ինը հարյուր հիսուներկու հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումար՝ ծրագրով կամ պայմանագրով սահմանված չափաքանակներով՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր միջոցառման (այսուհետև՝ միջոցառում) ֆինանսավորման համար կազմակերպության կողմից ներկայացված նախահաշիվը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները ներկայացված են պայմանագրի անբաժանելի մասը համարվող Հավելված N 1-ում, իսկ նախահաշիվը՝ Հավելված N 2-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Պետական մարմինն իրավունք ունի՝**

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ուսումնասիրել և ստուգել կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. որոշմամբ և պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

2.1.5. հետևել միջոցառումների կազմակերպման, անցկացման կամ մասնակցության ընթացքին,

2.1.6. պարբերաբար վերլուծել կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքները, մշակել առաջարկություններ գործունեության հետագա ծրագրերի բարելավման վերաբերյալ, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ,

2.1.7. հետ պահանջել միջոցառման իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցների և փաստացի կատարված ծախսերից առաջացած տնտեսումը,

2.1.8. պայմանագրի 2.4-րդ կետի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կազմակերպությունից հետ պահանջել հատկացված ֆինանսական միջոցները կամ դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.9. ամփոփել և գնահատել կազմակերպության կողմից ներկայացված տարեկան մարզական գործունեության ծրագրի կատարման արդյունավետությունը,

2.1.10. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է,

2.1.11. իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

2.2. կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը,

2.2.2. պետական մարմնից պահանջել վերացնել բոլոր այն թերություններն ու բացթողումները, որոնք խոչընդոտում են կազմակերպությանը լիարժեք իրականացնելու իր գործունեությունը պայմանագրի շրջանակներում,

2.2.3. իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. միջոցառումների կազմակերպման, անցկացման կամ մասնակցության նպատակով պետական աջակցության միջոցների շրջանակում, պետական մարմնի կողմից մշակված միջոցառման ծախսերի նախահաշվի սահմաններում, կազմակերպությանն ապահովել համապատասխան ֆինանսական միջոցներով,

2.4. կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով կամ պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.5. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին բովանդակային և ֆինանսական հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ոչ ուշ քան դեկտեմբերի 10-ը, ամփոփ տարեկան հաշվետվություն (Հավելված 4),

2.4.6. պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել **«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և/կամ ՀՀ աշխատաքային օրենսգրքով սահմանված կարգով,**

2.4.9. հատկացված միջոցներն օգտագործել պայմանագրի 1.2-րդ կետում նշված Հավելված N 1-ով նախատեսված միջոցառումների իրականացման համար՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ,

2.4.10. ծրագրի իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև ծրագրի իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել Պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ Պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար,

2.4.12. պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Պետական մարմնին վճարել տույժ՝ պայմանագրի 5.2-րդ և 5.3-րդ կետերով սահմանված կարգով և չափով:

2.4.13. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2025 թվականի դեկտեմբերի 20-ը, իսկ ժամանակացույցով պայմանավորված ավելի ուշ ավարտվող միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումից հետո:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված գումարը պետական մարմինը փոխանցում է կազմակերպությանը՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 3-ի՝ վճարման ժամանակացույցի:

4.2. Պետական մարմինը վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.3. Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման ակտերի հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:

4.4. Պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները Կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:

5.4. Պայմանագրի 5.2-րդ և 5.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառման իրականացման արդյունքում Կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործողությունը տարածվում է 2025 թվականի հունվարի 3-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա: Պայմանագիրը գործում է մինչև պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում պայմանագիր կնքած կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են դրամաշնորհ տրամադրած պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն	**«Աշխատանքային ռեզերվներ» ՄՀԿ**
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011033413 ՀՎՀՀ 02698732	ք. Երևան, Ագաթանգեղոսի 13 «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ 1150001517757722 ՀՎՀՀ 02513397
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
Հ. Հակոբյան /ստորագրություն/ Կ.Տ	Ա. Մեհրաբյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
2025 թ. ապրիլի 14-ին կնքված
N **ՀԿՄ 2025** պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	Իրականացվելիք միջոցառման անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1.	«Արտադպրոցական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» 1. ՀՀ «դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես» մրցումների անցկացում, 2. ՀՀ «դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես» մրցումների եզրափակիչ փուլի անցկացում	ՀՀ «դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես» մրցումներ 1. Մարզային փուլն անց է կացվելու ՀՀ 10 մարզերում և քաղաք Երևանում, որին մասնակցում են համայնքի առաջնությունում հաղթած 1-ից 6-րդ դասարանների աշակերտները (2 տղա, 2 աղջիկ), 2. Մասնակցում են մարզերի առաջնությունում 1-ին տեղ գրաված 4-ից 6-րդ դասարանների աշակերտները (2 տղա, 2 աղջիկ)	Դպրոցական տարիքի երեխաների մարզաձևերի զարգացում	**Արդյունքները** Դպրոցական տարիքի երեխաների տարբեր մարզաձևերի զարգացում և մրցանակային տեղերի գրավում: **Գնահատման չափանիշները** Վերոնշյալ ցուցանիշների վերլուծություն նախորդ տարիների ցուցանիշների համեմատությամբ:	2025թ. նոյեմբերի 1-ը	30952300
	Ընդամենը					30952300

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033413
ՀԿՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Աշխատանքային ռեզերվներ» ՄՀԿ

ք. Երևան, Ագաթանգեղոսի 13
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150001517757722
ՀԿՀՀ 02513397

Նախագահ՝

_____ Ա. Մեհրաբյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
2025 թ. ապրիլի 14-ին կնքված
N **ՀԿՄ 2025** պայմանագրի

Նախահաշիվ
ՀՀ «դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես» մրցումներ

№	Անվանումը	Չափման միավորը	Միավորի քանակը	Օրերի քանակը	Մեկ միավորի արժեքը (ՀՀ դրամ)	Ընդամենը (ՀՀ դրամ)
			ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐ			
1	Մասնակիցների (պատվիրակների) սնունդ	անձ	80 թիմ x 30	3	2 500	18 000 000
2	Գլխավոր մրցավարի, քարտուղարի, մրցավարների և սպասարկող անձնակազմի սնունդ	անձ	20 60 40	3	2 500	150 000 450 000 300 000
3	Մասնակիցների ճանապարհածախս (միջին սակագին)	անձ	80 թիմ x 30	3	900	6 480 000
4	Կազմակերպության ներկայացուցչի ճանապարհածախս	անձ	10	2	1 500	30 000
5	Կազմակերպության ներկայացուցիչ սնունդ	անձ	10	3	2 500	75 000
6	Կազմակերպության ներկայացուցիչ գիշերավարձ	անձ	10	2	3 000	60 000
7	Բանկային և այլ ծառայություններ	%	0,2			51 090
	Ընդամենը					**25 596 090**
			ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼ			
1	Մարզիկների (պատվիրակների) սնունդ (9 մարզ և Երևան)	անձ	10 թիմ x 16	4	2 500	1 600 000
2	Մարզիկների (պատվիրակների) սնունդ (Սյունիք)	անձ	1 թիմ x 16	5	2 500	200 000
3	Պատվիրակների գիշերավարձ (9 մարզ)	անձ	9 թիմ x 16	3	3 000	1 296 000
4	Պատվիրակների գիշերավարձ (Սյունիք)	անձ	1 թիմ x 16	4	3 000	192 000
5	Գլխավոր մրցավարի, քարտուղարի, մրցավարների և սպասարկող անձնակազմի սնունդ	անձ	2 18 4	4	2 500	20 000 180 000 40 000
6	Պատվիրակների ներքաղաքային տրանսպորտ	անձ	11 թիմ x 16	4	200	140 800
7	Կազմակերպության ներկայացուցչի ճանապարհածախս (միջին)	անձ	3	2	1500	9 000
8	Կազմակերպության ներկայացուցչի սնունդ	անձ	3	4	2 500	30 000

9	Կազմակերպության ներկայացուցչի գիշերավարձ	անձ	3	3	3 000	27 000
10	Գավաթ	հատ	1 1 1	I տեղ II տեղ III տեղ	9 000 7 000 5 000	21 000
11	Մեդալ	հատ	48	I տեղ II տեղ III տեղ	1 500	72 000
12	Դիպլոմ հաղթող թիմերի	հատ	48	I տեղ II տեղ III տեղ	350	16 800
13	Գավաթներ ըստ մարզաձևերի և դասարանների	հատ	72		5 000	360 000
14	Հավաստագիր	հատ	8 թիմ x 16		350	44 800
15	Հրավիրատոմս	հատ	28		350	9 800
16	Անհատական նվերներ (մարզական գույք, համազգեստ, պայուսակ)	հատ	48	I տեղ II տեղ III տեղ	20 000	960 000
17 -	Մրցման կազմակերպման գույք պարկ	հատ	4		3 000	12 000
-	օղակներ	հատ	4		1 500	6 000
-	ցատկապարան	հատ	4		1 500	6 000
-	թենիսի գնդակ	հատ	4		600	2 400
-	մեդիսինբոլ գնդակ	հատ	4		12 000	48 000
-	բասկետբոլի գնդակ	հատ	4		3 000	12 000
-	եզրագծի հատման ժապավեն	մ	10		750	7 500
-	բուլավաներ	հատ	44		300	13 200
-	օղակաձև ցանց	հատ	4		4 800	19 200
18	Բանկային և այլ ծառայություններ	%	0,2			10 710
	Ընդամենը					**5 356 210**
	ԸՆԴԱՄԵՆԸ					**30 952 300**

Նախահաշիվներում հաշվարկների համար հիմք է հանդիսացել ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ. հունվարի 25-ի թիվ 68-Ա/2 հրամանը

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033413
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար

Հ. Հակոբյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպություն

ք. Երևան, Ագաթանգեղոսի 13
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 11500015177577 2
ՀՎՀՀ 02513397

Նախագահ

Ա. Մեհրաբյան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 3
2025 թ. ապրիլի 14-ին կնքված
N **ՀԿՄ 2025** պայմանագրի

«Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպություն

2025թ. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման չափի վճարման ժամանակացույց (աճողական)

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Ընդամենը տարեկան (դրամ)	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2025 թվականի պետական բյուջեից (դրամ), ընդ որում՝											
		1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			տարի		
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ծրագիր	**30 952 300**	0	0	0	12562000	12562000	12562000	24761800	24761800	24761800	30952300	30952300	30952300
Ընդամենը	**30 952 300**	0	0	0	12562000	12562000	12562000	24761800	24761800	24761800	30952300	30952300	30952300

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033413
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար

_____ Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպություն

ք. Երևան, Ագաթանգեղոսի 13
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 115000151775772
ՀՎՀՀ 02513397

Նախագահ

_____ Ա. Մեհրաբյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 4
2025 թ. ապրիլի 14-ին կնքված
N **ՀԿՄ 2025** պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպություն_____

Ծրագրի անվանումը «_____»

՝	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամ)	Փաստացի գումարը (դրամ)	Շողումը նախահաշվի համեմատ (+-դրամ)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
	Ընդամենը				

«.....» .....2025 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ (_____)
ստորագրություն

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահ

_____ (_____)
ստորագրություն

Փաստաթղթերն ընդունեց՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու

_____ (_____)
ստորագրություն